# ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՎՏԱՆԳԱՎՈՐ ԹԱՓՈՆՆԵՐԻ ՎԵՐԱՄՇԱԿՄԱՆ, ՎՆԱՍԱԶԵՐԾՄԱՆ, ՊԱՀՊԱՆՄԱՆ, ՓՈԽԱԴՐՄԱՆ ԵՎ ՏԵՂԱԴՐՄԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԼԻՑԵՆԶԱՎՈՐՄԱՆ ՄԻՋԳԵՐԱՏԵՍՉԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

2017 թվականի հուլիսի 19-ին կայացած նիստում <<Հայաստանի Հանրապետությունում վտանգավոր թափոնների վերամշակման, վնասազերծման, պահպանման, փոխադրման և տեղադրման գործունեության լիցենզավորման>> միջգերատեսչական հանձնաժողովը քննարկել է <<Մինասյան Ռիսայքլինգ Քոմփանի>> ՍՊԸ-ի կողմից ներկայացված վտանգավոր թափոնների վերամշակման, վնասազերծման, պահպանման, փոխադրման և տեղադրման գործունեության լիցենզիա ստանալու հայտը և հետևյալ փաստաթղթերը.

1. Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության պետական փորձաքննական եզրակացության պատճենը,
2. <<Մինասյան Ռիսայքլինգ Քոմփանի>> ՍՊԸ-ի կանոնադրության պատճենը,
3. Կազմակերպության պետական գրանցման վկայականի պատճենը,
4. Իրավաբանական անձի գործադիր մարմնի ղեկավարի անձնագրի պատճենը,
5. Լիցենզավորվող գործունեության իրականացումն ապահովող մասնագետի աշխատանքային գրքույկի պատճենը:

Հաշվի առնելով վտանգավոր թափոնների, տվյալ դեպքում՝ բանեցված կապարային կուտակիչների, անվտանգ պահման հարցի կարևորությունը, ինչպես նաև շրջակա միջավայրի վրա ազդեցության դրական փորձաքննական եզրակացության առկայությունը՝ միջգերատեսչական հանձնաժողովն առաջարկեց <<Մինասյան Ռիսայքլինգ Քոմփանի>> ՍՊԸ-ին տրամադրել վտանգավոր թափոնների վերամշակման, վնասազերծման, պահպանման, փոխադրման և տեղադրման լիցենզիա:

Ա. Մինասյան

Ա. Ալեքսանդրյան

Ե. Տերտերյան

Ա. Մարտիրոսյան

Ա. Ղազարյան

Կ. Կարապետյան

Գ. Ամատունի

Ա. Առուստամյան

Ի. Հակոբյան